ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2014 թվականի N 338-Ա

<<ԳԵՂԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2014-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի <<ա>> ենթակետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումը և 2014 թվականի հուլիսի 18-ի N 23 աշխատանքային պայմանագրի 3.8 կետը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝ <<Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 2014-2019 թվականների գործունեության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել ընկերության 2014-2019 թվականների գործունեության ծրագրի կատարման վերաբերյալ ընկերության տնօրենի կողմից համապատասխան հաշվետվության ներկայացումը մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 28
ք. Հրազդան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 338-Ա ՈՐՈՇՄԱՆ

2014-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ <<ԳԵՂԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. «Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ Ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2007 թվականի մարտի 19-ի N30 որոշումների համաձայն «Աբովյան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում (գրանցման համար 222.120.00023. պետական գրանցման վկայական 03 Ա 051400):

Ընկերության գրանցման վկայականի համարն է 03 Ա 076986:

Ընկերության գտնվելու վայրը՝ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն:

Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված է անշարժ գույքի, այդ թվում հողամասի մակերեսը՝ 154.75 քառ. մետր, հողամաս՝ 0.1025-հա:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը 120 հազար դրամ է, թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը 24 հատ, որից հասարակ անվանական բաժնետոմս՝ 24 հատ, արտոնյալ բաժնետոմս՝ 0 հատ, փաստաթղթային՝ 0 հատ և ոչ փաստաթղթային՝ 0 հատ: Բաժնետոմսի անվանական արժեքը 5000 ՀՀ դրամ: Ընկերությունում պետական մասնակցությունը կազմում է 100 տոկոս: Ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է:

Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների ու ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվ:

Ընկերությունը որպես սեփականություն ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով և իր իրավասության սահմաններում կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու կրել պարտականություններ, ինչպես նաև հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2007թ-ին ընկերությանը տրվել է արտահիվանդանոցային լիցենզիաԿ-XX-001064 անժամկետ ժամանակով: Ընկերությունում կատարվում են լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ, գործում է ընտանեկան բժշկի ծառայություն:

2.Ներկայումս ընկերության կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.



Կազմակերպության նպատակներն ու խնդիրները իրագործելու համար լիազորությունները ըստ հորիզոնական /արտադրական ստորաբաժանումներ/ և ուղղահայաց /կառավարման աստիճանակարգեր/ կազմակերպական կառուցվածքների բաշխվում են հետևյալ կերպ.

1) Բժշկական անձնակազմ,

2) Միջին բուժ անձնակազմ,

3) Կրտսեր բուժ անձնակազմ:

Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներ են.

1. Ընտանեկան բժիշկ- 2

2. Ընտանեկան բուժքույր- 4

3. Դպրոցական բուժքույր -1

4. Հաշվապահ-1

5. Վարորդ-1

6. Մայրապետ-1

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Կատարելով հիվանդացության վերլուծություն պարզվել է , որ համայնքում առավել տարածված են շաքարային դիաբետը (մասնավորապես երկրորդ տիպի), զարկերակային գերճնշումը և սրտի իշեմիկ հիվանդությունը, որոնց վաղ հայտնաբերման նպատակով նախատեսվում է բնակչության ընդգրկվածության մեծացում կատարվող սկրինինգներում: Մոտ ապագայում նախատեսվում է PAP -քսուքի կատարման ներդրում ամբուլատորիայում:

Հիվանդացության դինամիկան վերջին տարիներում

Հիվանդություն/ մարդ	2012	2013	2014 /7ամիս/
Զարկերակային գերճնշում	305	314	303
Սրտի իշեմիկ հիվանդություն	96	98	93
Շաքարային դիաբետ	93	106	112

Կանոնավոր կերպով կատարվում են ՍԻՀ հիվանդների ԷՍԳ մոնիտորինգ, խոլեստերինի մակարդակի հսկում: Հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով կատարվում է 40-ից բարձր տարիքի անձանց արյան մեջ գլյուկոզայի, խոլեսթերինի , զարկերակային ճնշման,քաշի (ավելորդ քաշի վաղ հայտնաբերման և երկրորդ տիպի շաքարային դիաբետով հիվանդացության ռիսկի իջեցման նպատակով) սկրինինգներ: 2014-2019 թթ-ին նախատեսվում է կրծքագեղձի քաղցկեղի հաղ հայտնաբերմանն ուղղված շարունակական միջոցառումների կատարում: Երեխաների շրջանում կատարվում են թերսնուցման, սակավարյունության, տեսողության, լսողության խանգարումների վաղ հայտնաբերման հետազոտություններ: Նախատեսվում է սկրինգներում ազգաբնակչության ընդգրկվածության մեծացում: Արդեն իսկ նկատելի է հիվանդների վաղ դիմելիությունը և հաճախումների ավելացումը, կանխարգելիչ պատվաստումներին երեխաներին ներկայացնելու մայրերի շահագրգռվածությունը: Հետագա տարիներին նախատեսվում է ազգաբնակչության կրթման միջոցով հասնել պատվաստումներից հրաժարվելու ներկայումս առկա եզակի դեպքերի բացառման:

Ստորև ներկայացվում է հաճախումների վիճակագրությունը վերջին 3 տարիներին

2012թ	2013թ	2014թ/7ամիս/
10623	10955	6300

Հաճախումները 2012թ-ի համեմատ 2013-ին աճել են 3,1 %-ով, իսկ2014թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ մոտ 5%-ով:

Նեղ մասնագիտական ուղեգրումների և լաբորատոր-գործիքային հետազոտությունների վերլուծությունը ներկայացվում է հաջորդող աղյուսակում

	2012թ	2013թ	2014թ (7ամիս)
Նեղ մասնագետների ուղեգրումներ	1253	1979	817
Լաբորատոր-գործիքային հետազոտություններ հազ. դրամ	2582,4	2509,5	1297,6

Ներկա պահին ընկերությունում առկա է 1 ընտանեկան բժշկի թափուր հաստիք, որի համալրման նպատակով տեղադրվել է հայտարարություն համացանցում:

Ընկերությունն ունենալով ընտանեկան բժշկության բնագավառում հարուստ փորձ և բարի ավանդույթներ՝ (առողջ ապրելակերպի քարոզում, կանխարգելիչ, բուժական միջոցառումների իրականացում: Հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով պարբերաբար

կատարվում են սակավարյունության, տեսողության, լսողության, կրծքագեղձի քաղցկեղի սկրինինգներ: Քրոնիկ հիվանդությամբ տառապողներին տրվում են կյանքի որակի լավացմանն ուղղված խորհուրդներ, վերարտադրողական տարիքում գտնվող կանանց համար կատարվում են վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված խորհրդակցություններ և այլն), հեռանկարում նախատեսվում է ավելի որակյալ արտահիվանդանոցային բուժ օգնության կազմակերպում, մասնավորապես մեզի ընդհանուր քննության կատարում թեսթային եղանակով, PAP քսուքի վերցնում 2015թ-ից՝ արգանդի վզիկի քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2006 թ-ին ԾԻԳ-ի կողմից <<Առողջապահական համակարգի արդիականացում>> վարկային ծրագրի շրջանակում ընկերությունում կատարվել է կապիտալ վերանորոգում: <<Կամարիսի բուժակ մանկաբարձական կետ>>-ը գտնվում է Կամարիս համայնքին պատկանող շինությունում կապիտալ վերանորոգվել է <<Էմերջինգ մարքեթս գրուպ ԼՏԴ>>-ի կողմից 2008 թ-ին ԱՄՆՄԶԳ <<Դոնոր>> կազմակերպության կողմից առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրով: Շենքի բարվոք վիճակի պահպանման նպատակով նախատեսվում է կատարվել ընթացիք վերանորոգում: Շենքում առկա է բարձր խոնավություն , որի հետևանքով շարքից դուրս են եկել որոշ պատեր, տանիքը կաթում է:

Բժշկական սարքավորումների մաշվածության հետևանքով նախատեսվում է դրանց փոխարինումը նորով առաջիկա 5 տարիներին:

Ընկերության խնդիրներից է ազգաբնակչության շրջանում առողջ ապրելակերպի գիտակցության սերմանումը, լաբորատոր հետազոտությունների տեսակների ընդլայնումը /մասնավորապես մեզի անալիզի կատարում թեսթային եղանակով 2015թ-ից/:

Բնակչության բուժումն առավել արդյունավետ կազմակերպելու, ժամանակի կորստից խուսափելու նպատակով և հաշվի առնելով բնակիչների դժգոհությունը նախատեսվում է հրավիրել դեղագործական ընկերությունների՝ ամբուլատորիայում բացելու դեղատան մասնաճյուղ, տարածքի վարձակալության հիմունքներով՝ միաժամանակ ընկերությունում ապահովելով շահույթ:

Առավել որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով նախատեսվում է բուժ աշխատողների շարունակական վերապատրաստումներ:

IV. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետության կողմից երաշխավորվող անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալները 2012թ-ին կազմել են 27138,3 հազար դրամ,2013 թ-ին 27219,9 հազար դրամ, 2014թ-ին 30718,3 հազար դրամ:

Ցուցանիշ	Նշանակությունը	Հաշվարկային բանաձևը	ցուցանիշ
2	3	4	5
I. Վճարունակության և իրացվելիության ցուցանիշներ			
Բացարձակ իրացվելիության գործակից	ընթացիկ պարտավորությունների մարման հնարավորության աստիճան	դրամական միջոցներ ---------- -- կարճաժամկետ պարտավորություններ	0.98
Վճարունակության գործակից	ընթացիկ պարտավորությունների արագ (ակնթարթային) մարման աստիճան	դրամական միջոցներ ---------- կարճաժամկետ պարտավորություններ	0.98
Ընթացիկ իրացվելիության ընդհանուր գործակից	ընթացիկ ակտիվների կարճաժամկետ պարտավորություններին ծածկման աստիճան	ընթացիկ ակտիվներ ---------- - կարճաժամկետ պարտավորություններ	1.56
Ֆինանսական անկախության գործակից	սեփական կապիտալի մասը պասիվների մեջ	սեփական կապիտալ ---------- հաշվեկշիռ	0.34
Ակտիվների շահութաբերություն, %	ակտիվներում ներդրված յուրաքանչյուր դրամից կազմակերպության շահույթի ստացման չափ	կազմակերպության տրամադրության տակ մնացող շահույթ x 10 ---------- -- ակտիվների միջին մեծություն	10.3
Սեփական կապիտալի շահութաբերություն, %	կազմակերպության ներդրած միջոցներից ստացված շահույթի չափը	կազմակերպության տրամադրության տակ մնացող շահույթ x 100 ---------- - սեփական կապիտալ	30.5
Շահույթ/Ծախսեր գործակից	կազմակերպության կատարած ծախսերի արդյունավետության աստիճան	հաշվեկշռային շահույթ ---------- գործառնական ծախսեր	0.016

2014թ-2019թ-ին նախատեսվում է ընթացիկ իրացվելիության գործակիցը մոտեցնել 2-ի , իսկ ֆինանսական անկախության գործակիցը՝ 0.5-ի:

Ընկերության 2013թ-ի հասույթի, փոփոխուն և հաստատուն ծախսերի հաշվարկները ներկայացված են աղյուսակում

N	Ցուցանիշներ	D	ընդամենը
1	Իրացումից հասույթ	1	26627,4
2	Փոփոխուն ծախսեր	0.85	19887,2
3	Համախառն մարժա	0.15	6740,2
4	Հաստատուն ծախսեր	-	6960,5
5	Շահույթ/ վնաս/	-	220,3

Առևտրային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների համար կարևորագույն խնդիր է տվյալ կապիտալ ծախսումների պայմաններում առավելագույն շահույթի ստացումը, ինչը ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել ծախսերի այնպիսի կոմբինացիա, որի դեպքում հնարավոր բոլոր տարբերակներից շահույթը ամենամեծն է: 2014-2019թթ-ին նախատեսվում է ֆինանսական կայունության պաշարի մեծացում, ֆինանսական միջոցների ներհոսքի ավելացման հաշվին / տեղում կատարել մեզի ընդհանուր քննություն, վարձակալության տալ տարածք դեղատուն հիմնելու նպատակով/, որը կբերի ընկերության ֆինանսական դրության կայուն պահպանմանը:

2013թ-ին ընկերությունը չունի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գծով ժամկետանց պարտավորություններ:

V. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

1. Սույն զարգացման ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ընկերությունը ակնկալում է շահույթի ապահովում և ամբուլատոր բժշկական օգնության որակի բարելավում: